բոյ հանէ նմայ հայր 'ի որդէգրութենէ իւրմէ, ուրեմն որքան առաւել բարութիւն մեզ հարկաւոր է, զի զսպեսցուք կեանս մեր ըստ Օրինօք և ազատութեամբ զի արժանի գտցուք պաշտօնի Տեառն և ընկալցուք 'ի նմանէ իշխանութիւն որդիս Աստուծոյ լինիլ. այլ մի՛ սպասիր բարեկամ գտանել քեզ տեղի պաշտօնի այնքան անարատ առաջի ատենի Տեառն, եթէ ոչ գիտես յօրէնս Տեառն և յօրէնս վարուց կենաց քոց և ոչ ճանաչես բարի և չարն և ոչ վարձ գործոց ձեռաց քոյ ըստ ասացելոյն սրբազան Պօղոսի՝ պատիւ ըստ արժանեաց, ուրեմն հարկաւոր է մեզ ջանալ և ընտրել բարեգոյն Օրէնս և սահմանս վասն կենաց մերոց, այսքան կարճ ժամանակաւ 'ի երեսս երկրի, որ եթէ ըստ ասացելոյն մարգարէին ութսուն ամ, և կամ 'ի բերմանէ ժամանակին քանիցս ամ որ իցէ կալով մնայցեմք 'ի մարմնի՝ արժանի գտցուք մեզ որպէս մարդ 'ի պատուոյ և արժանի որդէգրութեան արարչին մերոյ պահելով պատիւն զօրութեան հոգւոյ մերոյ որում աւանդէ առ մեզ զերապայլ և ամենապայծառ պատուականութենէ Տեառնէ և արարչէ մերմէ, զի նայ արժանի պատուոյ մեզ արար և այնքան զմեզ սիրեաց, որ ոչ միայն բանիւ հրամանաւ միայն ստեղծեաց մեզ որպէս միւս արարածք, այլ 'ի լուսապայլ և մաքրազարդ անճառելի շնչովն իւրմէ փչեաց զո-